ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.01.2023, N 4 (7895)) **տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թվականի հունվարի 12-ի N 4 (7895) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի հունվարի 24-ին ռեկտորին դիմում է ներկայացրել տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ֆիրուզա Նորայրի Մայիլյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց. Ֆ.Ն.Մայիլյանը ծնվել է 1975 թվականի հոկտեմբերի 20-ին Գետաշեն գյուղում: 1982-1992 թթ. նա սովորել է Երևանի N 166 միջնակարգ ռուսական դպրոցում: 1992 թվականին ընդունվել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ ((ԵրՊԺՏԻ), ներկայում՝

պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ ((ԵրՊԺՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) և 1997 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է հիշյալ ինստիտուտի լրիվ դասընթացը «Աշխատանքի էկոնոմիկա և սոցիոլոգիա» մասնագիտությամբ. նրան տրվել է տնտեսագետի որակավորում: 1997 թվականին նա ընդունվել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի ասպիրանտուրա (քաղաքատնտեսության ամբիոն)՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ և 2001 թվականին ազատվել է ասպիրանտուրայից ժամկետը լրանալու կապակցությամբ:

2002 թվականին Ֆ.Ն.Մայիլյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Աշխատավարձի և համախառն ներքին արդյունքի փոխազդեցության հիմնախնդիրները» թեմայով և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2005 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2018 թվականին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Մարդկային կապիտալի իրացման տեսական հիմնախնդիրները» թեմայով Ը.00.01՝ «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2018 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Ֆ.Ն.Մայիլյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 42 է (1 ուսումնական ձեռնարկ, 1 մենագրություն, 1 ուսումնաօժանդակ ձեռնարկ, 1 մեթոդական ցուցումներ՝ համահեղինակությամբ, 38 գիտական հոդված, որից 13-ը՝ միջազգային գիտական ամսագրերում):

Աշխատանքային գործունեությունը: 2000 թվականի փետրվարի 10-ից առ այսօր Ֆ.Ն.Մայիլյանը աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում. նախ՝ 10.02.2000 - 01.05.2000՝ դասախոս (փոխարինող), 01.09.2000 - 22.12.200՝ դասախոս (փոխարինող), 01.11.2001 - 02.09.2022՝ դասախոս, 02.09.2002 - 22.12.2005՝ ասիստենտ, 22.12.2005 - 25.11.2013՝ դոցենտ, 25.11.2013 - 20.06.2017՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 20.06.2017 - 05.03.2018՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2018 թվականի մարտի 5-ից՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ՝ մրցույթով ընտրվելու կապակցությամբ:

Տիրապետում է ռուսերենին, գերմաներենին, անգլերենին:

Ամուսնացած է, ունի 2 դուստր:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը տեղեկացրեց նաև, որ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված

մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի փետրվարի 10-ին ռեկտորին դիմում էր ներկայացրել նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Ատոմ Շավարշի Մարգարյանը, սակայն 2023 թվականի փետրվարի 27-ին նա ներկայացրել է ինքնաբացարկի դիմում:

Նա նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի 2023 թվականի փետրվարի 20-ի նիստում (արձանագրություն N 8) քննարկվել է տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ֆ.Ն.Մայիլյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Ֆ.Ն.Մայիլյանը ներկայացրել է տնտեսագիտության տեսության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Ամբիոնի նիստին ելույթներ են ունեցել ամբիոնի դոցենտներ Ա.Շ.Մարգարյանը, Վ.Ս.Վլասյանը, Ա.Ա.Վարդանյանը, ավագ դասախոս Ս.Ա.Գրիգորյանը: Նիստում բաց քվեարկության արդյունքներով (կողմ՝ 16, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0) որոշվել է, որ Ֆ.Ն.Մայիլյանը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին: Այնուհետև որոշվել է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդներից մեկին նախապատվություն տալու հարցը դնել ամբիոնի նիստի փակ գաղտնի քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 11, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 3) նախապատվություն են տվել Ֆ.Ն.Մայիլյանի թեկնածությանը տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 22-ի նիստում (արձանագրություն N 13), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝

տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Ֆիրուզա Նորայրի Մայիլյանը ներկայացրեց տնտեսագիտության տեսության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտներ Ա.Շ.Մարգարյանը, Ա.Վ.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ֆիրուզա Նորայրի Մայիլյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 52-ը. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 50, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ֆիրուզա Նորայրի Մայիլյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան